ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԺԻՐԱՅՐ ՍԱՄՎԵԼԻ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ը.00.08 «Մաթեմատիկական տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ - 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Հայկ Լևոնի Սարգսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Վահրամ Վաղինակի Բաղդասարյան

իրավագիտության թեկնածու
Արամ Պողոսի Վարդևանյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Միքայել Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2017 թ. փետրվարի 3-ին ժամը 15^{00}-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0009, ք. Երևան, Խ. Աբովյան 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016 թ. դեկտեմբերի 30-ին:

015 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
տեխնիկական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր՝ Արամ Հմայակի Առաքելյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: XX դարի հատկանշական միտումներից էր սահմանադրությունների ընդունման հաղթարշավն ողջ աշխարհում: XXI դարի գերակա միտումը սահմանադրականության հաստատումն է լինելու, երբ սահմանադրական հիմնարար սկզբունքներն ու նորմերը տեքստային ձևակերպումներից «միս ու արյուն» կստանան, կիրացվեն իրական կյանքում՝ դառնալով ապրող իրողություններ:

Սահմանադրատնտեսագիտական եռաչափ հետազոտական տիրույթը խիստ պարզորոշ է և գտնվում է ինտենսիվ գիտական մշակումների փուլում:

Սահմանադրականության գնահատման հետազոտությունն ունի ինչպես համընդհանուր, այնպես էլ՝ տեղական այժմեականություն:

Համընդհանրական դիտահորիզոնում հարկ է արձանագրել, որ աշխարհի սակավաթիվ երկրներ են հաջողել միայն սահմանադրականության բարձրամակարդակության ապահովման հարցում: Մինչդեռ բազում երկրների բնութագրականն ու ուղեկիցն է դարձել սահմանադրականության պակասուրդը՝ տեղ-տեղ ընդունելով ահռելի չափեր, ինչն արտացոլվում է հանրային կյանքի գրեթե բոլոր բնագավառներում զարգացման արգելակմամբ, երբ տնտեսական զարգացման հեռանկարները դառնում են խիստ մշուշոտ: «Դեպի՛ սահմանադրականություն» ուղենիշի անհամարժեք հասցեագրումն ուղիղ համեմատական կախվածության մեջ է գտնվելու «ձախողված» երկրաընտանիքի ընդլայնման հետ՝ առաջ բերելով նոր աֆղանստաններ, լիբիաներ, սիրիաներ... Նմանօրինակ գերանբարենպաստ զարգացումների կանխարգելման հուսալի երաշխիքն երկրում սահմանադրականության պակասուրդի հաղթահարման նպատակադրման և անընդհատելի շարունակականության ապահովման մեջ է, ինչն անհնար է կենսագործել առանց սահմանադրականության և դրա պակասուրդի գնահատման կենսունակ գիտամեթոդական կառուցակարգերի առկայության, որոնք հընարավորություն կընձեռեն համակողմանիորեն ախտորոշել սահմանադրականության վիճակն երկրում՝ թույլ տալով ոչ միայն չափել դրա մակարդակը, այլև՝ բացահայտել դրա պակասուրդը կազմավորող դրդապատճառները՝ այսպես ասած սահմանադրականության «անհարթությունները», և նպատակաուղղել ջանքերը դրանց հարթման ուղղությամբ, ասել է թե՝ իրականացնել սահմանադրականության շարունակական մշտադիտարկում և կառավարում:

Հետազոտությունն ունի նաև ընդգծված տեղական արդիականություն՝ պայմանավորված Հայաստանի Հանրապետությունում ընթացող սահմանադրական արդի զարգացումներով, որոնց ամենանշանակալի հանգրվաններից էր բարեփոխված Սահմանադրության ընդունումը: Վերջինս, սակայն, ոչ թե որոշակի եզրագիծ էր, այլ ընդհակառակը՝ հանրային-քաղաքական-տնտեսական կյանքի սահմանադրականացման նոր սկզբնագիծ, քանզի անգամ բարեփոխված սահմանադրությունն երկրում սահմանադրականության հաստատման բավարար պայման չէ:

Վերջինիս կարելի է հասնել սահմանադրականության գնահատման, մշտադիտարկման ու կառավարման շարունակական գործընթացների ազդեցության ուժով՝ թույլ տալով ապահովել սահմանադրությամբ հռչակված սկզբունքների ու նորմերի

փաստացի գոյությունն իրական կյանքում: Ինչպես հստակ ամրագրվեց ՀՀ Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում. «պետք է ներդրվի երկրում սահմանադրականության ապահովման ու դրա մշտադիտարկում իրականացնելու գործուն համակարգ... Սահմանադրության ընդունումն ինքնին երկրի սահմանադրաիրավական խնդիրները չի լուծում: Դրանց լուծման երաշխիքը Սահմանադրությունը կյանքի կոչելն է, երկրում սահմանադրականության հաստատումը... Վերջինիս ապահովման համար... սահմանադրականության շարունակական ախտորոշումը /դիագնոստիկան/ և մշտադիտարկումը /մոնիթորինգը/ միջոց են հասարակական կյանքում օբյեկտիվ իրավիճակը գնահատելու և պետական իշխանության մարմինների գործառնական լիազորությունների արդյունավետ գործադրմամբ առկա անհամապատասխանությունները, բացերն ու տարաբնույթ ձևախեղումները հաղթահարելու համար [կառավարում]»: Այս խորին խորհրդի գիտական նյութականացումը կարող է ապահովվել *«տնտեսագիտական մոտեցման» գործադրմամբ սահմանադրականության հանդեպ*:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Հետազոտության *նպատակը* խնդրո առարկա բազմաբարդ ու բազմաձալ երևույթի՝ սահմանադրականության մակարդակի գնահատումն է, և դրա մշտադիտարկման համար անհրաժեշտ կայուն հիմքերի ձևավորումը: Նշված նպատակի նյութականացման համար առաջադրվել և լուծվել են հետևյալ *խնդիրները*.

- պարզորոշել սահմանադրական տնտեսագիտության տիրույթը՝ հետազոտելով դրա հասկացութային շրջանակները, առարկան ու մեթոդաբանական գործիքակազմը, տեսական նախահիմքերն ու գաղափարական հիմնասյուները, հիմնական հոսանքներն ու սահմանակից գիտաուղղությունները, զարգացման ընթացքը՝ ծագումից մինչև մեր օրերը,
- քննական վերլուծության ենթարկել ՀՀ սահմանադրական բարեփոխումների տնտեսագիտական հատույթը,
- բանաձևել «սահմանադրականություն» հասկացությունը գործառնականորեն՝ գնահատման նկատառումներից ելնելով, միջազգային փորձի հիման վրա,
- մշակել «սահմանադրականություն» հասկացության կառուցվածքը՝ այն տարրալուծելով գնահատելի ցուցչակազմի,
- ձևավորել սահմանադրականության գնահատման տվյալների շտեմարանների հուսալի, միջազգային լայն ճանաչում վայելող և երկրների լայն ծածկույթ պարփակող համակազմ,
- մշակել սահմանադրականության գնահատման տնտեսագիտամաթեմատիկական մեթոդ՝ հիմնված համաթվերի կառուցման միջազգային լավագույն փորձն արտահայտող ռելսերի վրա,
- գնահատել սահմանադրականության մակարդակն արտացոլող «Սահմանադրականության համաթվի» արժեքը դիտարկվելիք երկրներից յուրաքանչյուրի համար,
- ախտորոշել սահմանադրականության վիճակը և բացահայտել սահմանադրականության պակասուրդի պատճառները՝ ՀՀ օրինակով ուղենշելով հաղ-

թահարման ուղիները՝ այդպիսով ձևավորելով սահմանադրականության մշտադիտարկման կայուն հիմքեր:

Հետազոտության օբյեկտն ու առարկան: Հետազոտության *օբյեկտը* սահմանադրականությունն է աշխարհի տարբեր երկրներում, մասնավորապես ու հատկապես՝ Հայաստանի Հանրապետությունում, իսկ *առարկան*՝ սահմանադրականության մակարդակի գնահատման տնտեսագիտամաթեմատիկական մեթոդների մշակումը:

Հետազոտության հիմնական գիտական նորույթը: Ատենախոսության շրջանակներում իրականացված հետազոտությունների արդյունքում ստացվել են մի շարք գիտական արդյունքներ, որոնցից գիտական նորույթ պարունակող հիմնարդյունքներն են.

- ուղենշվել է «տնտեսագիտական մոտեցման» կիրառությունը սահմանադրականության հանդեպ՝ ձևակարգելով սահմանադրականության տնտեսագիտության տիրութային սահմանները,
- առաջարկվել է սահմանադրականության գնահատման հայեցակարգային ձևաչափ՝ առաջադրելով սահմանադրականության գործառնական սահմանում, մշակելով «սահմանադրականության» և «Սահմանադրականության համաթվի» կառուցվածքը, ձևավորելով սահմանադրականության գնահատման ցուցչակազմ և ենթացուցչակազմ,
- մշակվել է սահմանադրականության գնահատման համաթվային մեթոդաբանություն՝ հիմնված տնտեսագիտամաթեմատիկական և տնտեսաչափական մեթոդների ու գործիքակազմի վրա,
- ստացվել է սահմանադրականության մակարդակի գնահատականն արտացոլող «Սահմանադրականության համաթվի» արժեքն աշխարհի 142 երկրների համար,
- ստացվել են սահմանադրականության ներերկրային և միջերկրային համեմատական վերլուծության արդյունքները՝ շեշտադրելով Հայաստանի Հանրապետությունում սահմանադրականության վիճակի ախտորոշումը:

Հետազոտության արդյունքների տեսական և գիտագործնական նշանակությունը: Ատենախոսության արդյունքների հիմնական տեսական նշանակությունը սահմանադրական տնտեսագիտությանը լրացնող սահմանադրականության տնտեսագիտության տիրույթի ձևակարգման մեջ է: Ատենախոսության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ ստացված արդյունքները կարող են անհրաժեշտ հիմք ծառայել սահմանադրականության մշտադիտարկման հաստատութենական (ինստիտուցիոնալ) գործուն մեխանիզմի ձևավորման համար՝ երկարաժամկետում ուղենշելով պետաիշխանական լիազորությունների գործադրմամբ սահմանադրականության կառավարման արդյունքում դրա պակասուրդի կրճատումը: Ստացված արդյունքները կարող են օգտակար լինել այլ հետազոտողների ու մասնագետների համար:

Հետազոտության արդյունքների փորձարկումն ու հրապարակումները: Հետազոտության արդյունքները քննարկվել են ԵՊՀ տնտեսագիտության ու կառավարման ֆակուլտետում 2015 թվականից ի վեր անցկացվող «Սահմանադրական տնտեսագիտություն» սեմինարաշարի ընթացքում, ԵՊՀ տնտեսագիտության մեջ մաթե-

մատիկական մոդելավորման ամբիոնի նիստում, ինչպես նաև՝ ներկայացվել Հայկական տնտեսագիտական միության VI տարեկան գիտաժողովում (2016 թ.), Հայկական տնտեսագիտական միության V տարեկան գիտաժողովում (2015 թ.), Հայ-ռուսական համալսարանի հոբելյանական X տարեկան գիտաժողովում (2015 թ.), Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր միջազգային 4-րդ գիտաժողովում (2016 թ.), Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր միջազգային 3-րդ գիտաժողովում (2015 թ.), ԵՊՀ ՈՒԳԸ Տարեկան գիտական նստաշրջանում (նվիրված հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին) (2015 թ.):

Հետազոտության արդյունքները հրապարակվել են մեկ մենագրությունում և ինը գիտական հոդվածներում:

Հետազոտության տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը: Որպես հետազոտության տեսամեթոդական հիմք են ծառայել տնտեսագիտական մտքի, սահմանադրական տնտեսագիտության, սահմանադրականության, դրա գնահատման, համաթվերի կառուցման վերաբերյալ հայ և օտարերկրյա հեղինակների աշխատությունները, մարդու իրավունքների միջազգային օրինաշարը, ՀՀ սահմանադրահրավական դաշտը և այլ աղբյուրներ: Հետազոտության ընթացքում կիրառվել են տնտեսագիտամաթեմատիկական և տնտեսաչափական մեթոդներ, մասնավորաբար՝ քլաստերային վերլուծության, գործոնային վերլուծության, տվյալների բնականոնացման, կշռման ու միացքավորման մեթոդները, ինչպես նաև՝ համակարգային, համեմատական, գրաֆիկական և աղյուսակային վերլուծության մեթոդները:

Որպես հետազոտության տեղեկատվական հիմք են ծառայել Միավորված ազգերի կազմակերպության, Համաշխարհային բանկի, Աշխատանքի միջազգային կազմակերպության, Համաշխարհային տնտեսական համաժողովի, Ազատության տան, Հերիթիջ հիմնադրամի, Բերթելսման հիմնադրամի, Յունեսկոյի վիճակագրական ինստիտուտի, Կենտրոնական հետախուզական վարչության, Ֆրեյզեր և Կատո ինստիտուտների, Լրագրողներ առանց սահմանների կազմակերպության, Համեմատական սահմանադրություններ ծրագրի տվյալների շտեմարաններն ու հրապարակումները:

Ատենախոսության ծավալն ու կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության ծավալը (առանց հավելվածների) կազմում է 140 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **«Ներածություն»** բաժնում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են ատենախոսության նպատակն ու խնդիրները, օբյեկտն ու առարկան, ներկայացվել են հետազոտության գիտական նորույթ հանդիսացող հիմնարդյունքները, արդյունքների գիտագործնական նշանակությունը, փորձարկումըն ու հրապարակումները, ինչպես նաև՝ ատենախոսության տեսամեթոդական ու տեղեկատվական հիմքերը, ծավալն ու կառուցվածքը:

Ատենախոսության **առաջին՝ «Սահմանադրատնտեսագիտական հետազոտական տիրույթը» գլխում** ներկայացվել է համանուն եռաչափ տիրույթը՝ սահմանադրականության տնտեսագիտությունը, որպես տնտեսագիտության զարգացման նոր հանգրվան, սահմանադրական տնտեսագիտության՝ նոբելյան մրցանակակիր գիտաուղղության հարացույցը և ՀՀ սահմանադրական բարեփոխումների տնտեսագիտական հատույթի քննական վերլուծությունը:

«Քաղաքատնտեսություն - էկոնոմիքս - տնտեսագիտական կայսերապաշտություն» շուրջ երկուսուկեսդարյա էվոլյուցիոն զարգացման ընթացքում տնտեսագիտությունը ձեռք է բերել առանձնահատուկ մոտեցում, որը մեծ հաջողությամբ կիրառվել է մի քանի տասնյակ ոչ տնտեսագիտական տիրույթների հանդեպ՝ հանգեցնելով գիտահետազոտական նոր ուղղությունների առաջացման: «Տնտեսագիտական մոտեցման» առանցքը կազմում են երկու հիմնարարներ՝ մեթոդաբանական անհատապաշտությունն ու ռացիոնալության սկզբունքը (որը պայմանավորում է առավելացման վարքագծի դրսևորումը)[1]: Այսպես, տնտեսագիտական մոտեցմամբ սպառողը դիտարկվում է, որպես ռացիոնալ էակ, ով առավելացնում է իր օգտակարությունը, կազմակերպությունը դիտարկվում է, որպես ռացիոնալ միավոր, որն առավելացնում է իր շահույթը և այլն: Առաջարկվում է «տնտեսագիտական մոտեցման» կիրառությունը պետության հանդեպ, որը, որպես ռացիոնալ միավոր, պետք է ձգտի առավելացնել սահմանադրականությունը:

Սահմանադրականության տնտեսագիտությունը «տնտեսագիտական մոտեցման» կիրառությունն է սահմանադրականության հանդեպ, *գիտահետազոտական նոր ուղղություն, որն ուսումնասիրում է երկրում սահմանադրականության մակարդակի առավելացման (մաքսիմալացման) հիմնահարցերը՝ սահմանադրականության գնահատման, մշտադիտարկման ու կառավարման շարունակական գործընթացների իրականացման ճանապարհով:*

Ինչպես սահմանումն է հուշում, սահմանադրականության տնտեսագիտության հետազոտական երեք հիմնական ուղղություններն են.

- *սահմանադրականության գնահատման հետազոտությունը*, որը, հաշվի առնելով խնդրո առարկա հասկացության խիստ բազմաչափ բնույթը, կարող է իրականացվել բացառապես բաղադրյալ ցուցչի՝ «Սահմանադրականության համաթվի» կառուցման ճանապարհով,

[1] Տե՛ս **Milonakis, D., Fine, B.** "From Economics Imperialism to Freakonomics: The Shifting Boundaries between Economics and other Social Sciences," Routledge, 2009, **Milonakis, D., Fine, B.** "From Political Economy to Economics: Method, the social and the historical in the evolution of economic theory," Routledge, 2009:

- *սահմանադրականության մշտադիտարկման հետազոտությունը,* որը միտված է սահմանադրականության և դրա պակասուրդի մակարդակի փոփոխության միտումների հետազոտմանն ու այդ միտումները պայմանավորող պատճառների բացահայտմանը,
- *սահմանադրականության կառավարման հետազոտությունը,* որը միտված է երկրի սահմանադրականության մակարդակի բարձրացմանը՝ շեշտադրելով այն ուղղություններն ու դրանց գծով գործողությունները, որոնց կենսագործումը թույլ կտա գործնականում մոտենալ սահմանադրականության առավելացման նպատակի բավարարմանը:

Սահմանադրականության տնտեսագիտությունը սերում է դասական քաղաքատնտեսության, նորդասական տնտեսագիտության և հաստատութենական տնտեսագիտության միացյալ ակունքներից: Դրա գաղափարական հիմնասյուներն են մեթոդաբանական անհատապաշտությունն ու ռացիոնալության սկզբունքը, իսկ մեթոդաբանական գործիքակազմը՝ տնտեսագիտամաթեմատիկական ու տնտեսաչափական մեթոդներն ու սահմանադրականության համեմատական վերլուծության (ներերկրային և միջերկրային) մեթոդը:

Սահմանադրատնտեսագիտական հետազոտական տիրույթի երկրորդ չափումը **սահմանադրական տնտեսագիտությունն** է՝ *գիտաուղղություն, որն ուսումնասիրում է ազգային տնտեսական համակարգի շրջանակներում անհատի սոցիալ-տնտեսական իրավունքների առավելագույն բավարարման հնարավորությունները՝ տնտեսական նպատակահարմարությունը սահմանադրական զարգացման առկա մակարդակի հետ օպտիմալ համակցման ճանապարհով*[2]: Հիմնադիրը Ջեյմս Բյուքենենն է, ով 1986 թ. արժանացավ Նոբելյան մրցանակի: Սահմանադրական տնտեսագիտությունը զգալիորեն ընդլայնեց ավանդական տնտեսագիտության տիրութային սահմանները՝ տնտեսագիտական վերլուծությունների կենտրոնացումը առկա սահմանափակումների *շրջանակներում* ընտրության կատարումից ուղղորդելով դեպի սահմանափակումների *միջև* ընտրության կատարումը՝ արտահայտելով այն համոզմունքը, որ բարեփոխումներին միտված ջանքերը պետք է ուղղված լինեն կանոնների փոփոխությանը, այլ ոչ թե գործիչների վարքագծի վրա ներազդելու ճանապարհով սպասվող արդյունքները ձևափոխելուն[3]:

Սահմանադրատնտեսագիտական հետազոտական տիրույթի երրորդ չափումն **երկրի սահմանադրության տնտեսագիտական հատույթն** է: Պայմանավորված արդի զարգացումների հրամայականով՝ ՀՀ սահմանադրական բարեփոխումների տնտեսագիտական հատույթը համակողմանի քննական վերլուծության է ենթարկվել: Հիմնական առաջընթացը կայանում է ՀՀ տնտեսական կարգի սահմանման և հիմնական իրավունքների ու պետության նպատակների և օրենսդրական երաշխիքների սահմանազատման մեջ: Որպես դրական զարգացում պետք է արձանագրել նաև սե-

---

[2] Տե՛ս **Лафитский В.И., Мау В.А.** Конституционная экономика и основы экономического положения личности // Очерки Конституционной Экономики. 23 октября 2009 года / Ответственный редактор Г.А. Гаджиев. –М.: Юстицинформ, 2009, էջ 92:

[3] Տե՛ս **Buchanan, James M.** "The Domain of Constitutional Economics," Constitutional Political Economy, Vol. 1, No. 1, 1990, էջ 2-3, **Van den Hauwe, Ludwig.** "Constitutional economics," The Elgar companion to law and economics, 2nd edition / Edited by Jurgen G. Backhaus. – Edward Elgar Publishing, 2005, էջ 223-224, 227:

փականության, աշխատանքի, սոցիալական ապահովության իրավունքների, պետական քաղաքականության նպատակների և մի շարք այլ լրամշակումներ: Որոշակի անորոշություններ են ձևավորվել ՀՀ կենտրոնական բանկի անկախության, պետական բյուջեի սահմանադրական կարգավորումների շուրջ: Որպես հետընթաց հարկ է արձանագրել արդարացի վարձատրության իրավունքի վերացումը Սահմանադրությունից, նվազագույն աշխատավարձի, բավարար կենսամակարդակի, հարկման, բընապաշարների ողջամիտ օգտագործման առավել թույլ կարգավորումները:

Ատենախոսության **երկրորդ՝ «Սահմանադրականության գնահատման հայեցակարգային մոտեցումները» գլխում** հետազոտվել է «սահմանադրականություն» հասկացությունը, դրա բաղադրատարրերը, առաջադրվել է սահմանադրականության գործառնական սահմանում, մշակվել է սահմանադրականության գնահատման կառուցվածքային ձևաչափ, ձևավորվել է գնահատման տվյալների շտեմարանների համակազմ, սահմանադրականության գնահատման համակարգված ցուցչակազմ և ենթացուցչակազմ:

Սահմանադրականությունը գործառնականորեն բանաձևվել է, որպես *զարգացման մակարդակ, երբ սահման է դրված պետական իշխանության կամայականության հանդեպ՝ այն սահմանափակված է մարդու իրավունքներով և իշխանական թևերի բաժանման մեխանիզմով, երբ պետական իշխանությունը գործում է արդյունավետորեն՝ ծառայելով քաղաքացիների բարեկեցության շարունակական բարձրացման վերջնանպատակին, երբ սահմանադրական հիմնարար սկզբունքներն ու նորմերն իրացված են իրական կյանքում:*

«Սահմանադրականություն» հասկացության կառուցակարգմամբ, կառուցակարգվեց նաև սահմանադրականության մակարդակի գնահատականն արտացոլող «Սահմանադրականության համաթիվը»՝ որպես սահմանադրականության երկու չափումների (մարդու իրավունքներ ու պետաիշխանական համակարգ) և երկու առումների (դրական ու բացասական) հատութային կառուցվածքային տարրերի իրացվածության մակարդակներն արտացոլող կառուցվելիք համաթվերի և ենթահամաթվերի միասնացման արդյունքում ձևավորված բաղադրյալ ցուցիչ:

Գծապատկեր 1. Սահմանադրականության համաթվի կառուցվածքային ամփոփ պատկերը[4]

[4] Մշակվել է հեղինակի կողմից:



Սահմանադրականության գնահատման տվյալների շտեմարանների ձևավորումն իրագործվել է տվյալների հուսալի, միջազգային լայն ճանաչում ունեցող և երկրների լայն ծածկույթ պարփակող աղբյուրների համադրման ճանապարհով:

Սահմանադրականության համաթվի մշակված կառուցվածքային ձևաչափի և տվյալների շտեմարանների, մարդու իրավունքների միջազգային օրինաշարի համապարփակ (ունիվերսալ) հենքի հիման վրա մշակվեց սահմանադրականության գնահատման ցուցչակազմն ու ենթացուցչակազմը, որը ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Սահմանադրականության համաթվի ցուցչակազմը, ենթացուցչակազմը և տվյալների աղբյուրները[5]

ՑՈՒՑԻՉ	N	ԵՆԹԱՑՈՒՑԻՉ	ԱՂԲՅՈՒՐ
		I. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ	
1. Բավարար կենսամակարդակի իրավունք	1.1	Մեկ շնչին ընկնող ՀՆԱ	ՀԶՑ/ՀՓ
	1.2	Ջինիի գործակից	ՀԶՑ/ՀՓ
	1.3	Աղքատության մակարդակ	ՀԶՑ/ՀՓ
2. Սեփականության իրավունք	2.1	Սեփականության իրավունքներ-1	ՏԱՀ
	2.2	Սեփականության իրավունքներ-2	ՀՄՀ
	2.3	Մտավոր սեփականության պաշտպանվածությունը	ՀՄՀ
3. Աշխատանքի իրավունք	3.1	Գործազրկության մակարդակ	ՀԶՑ
	3.2	Ժամային կարգավորումները	ՏԱԱ
	3.3	Աշխատանքի ազատությունը	ՏԱՀ
	3.4	Աշխատանքի ընդունման կարգավորումները և նվազագույն աշխատավարձի ազդեցությունը	ՏԱԱ
	3.5	Աշխատանքի ընդունման և ազատման գործընթացները	ՀՄՀ
	3.6	Աշխատողների իրավունքներ	ՍԻՌԻ
4. Սոց. ապահովության իրավունք	4	Սոցիալական ապահովությանն ուղղված հանրային ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում	ՍԱՏՀ
5. Տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրավունք	5.1	Գործարարության ազատությունը	ՏԱՀ
	5.2	Տեղական մրցակցության ինտենսիվությունը	ՀՄՀ
	5.3	Շուկայական գերիշխանությունը	ՀՄՀ

[5] Մշակվել է հեղինակի կողմից:

	5.4	Հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետությունը	ՀՄՀ
6. Կրթության իրավունք	6.1	Գրագիտության մակարդակ	ՅՎԻ/ՀՓ
	6.2	Կրթության ոլորտում պետական ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում	ՀՋՑ
	6.3	Կրթության հասանելիություն	ՄՋՀ
	6.4	Կրթական համակարգի որակը	ՀՄՀ
	6.5	Առաջնային կրթության բնագավառում ընդգրկվածությունը	ՀՄՀ
	6.6	Բակալավրիատում ընդգրկվածությունը	ՀՄՀ
	6.7	Մագիստրատուրայում և ասպիրանտուրայում ընդգրկվածությունը	ՀՄՀ
II. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ			
7. Դավանանքի ազատության իրավունք	7	Կրոնի ազատություն	ՍԻՌԻ
8. Կարծիքի ազատ արտահայտման իրավունք	8.1	Խոսքի և մամուլի ազատություն	ՍԻՌԻ
	8.2	Մամուլի ազատության համաշխարհային համաթիվ	ՄԱՀՀ
	8.3	Մամուլի ազատությունը	ՖՀ
	8.4	Արտահայտման և համագումնքների ազատություն	ԱԱՀ
9. Հավաքների և միավորումների ազատության իրավունք	9.1	Հավաքների և միություններ կազմելու ազատություն	ՍԻՌԻ
	9.2	Ասոցացման և կազմակերպական իրավունքներ	ԱԱՀ
10. Ազատ տեղաշարժման իրավունք	10.1	Ներքին տեղաշարժման ազատություն	ՍԻՌԻ
	10.2	Արտաքին տեղաշարժման և ճանապարհորդելու ազատություն	ՍԻՌԻ
11. Ընտրական իրավունք	11.1	Ընտրական գործընթաց	ԱԱՀ
	11.2	Ընտրական ինքնորոշում	ՍԻՌԻ
	11.3	Քաղաքական բանտարկություններ	ՍԻՌԻ
	11.4	Քաղաքական բազմակարծություն և մասնակցություն	ԱԱՀ
12. Իրավունքի գերակայություն	12.1	Իրավունքի գերակայություն-1	ՀԿՑ
	12.2	Իրավունքի գերակայություն-2	ՄԱՀ
III. ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՆՋԱՏՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ			
13. Պետ. իշխանության տարանջատում	13	Իշխանության և գործադիր ուժերի տարանջատում	ՎՀ
14. Դատական իշխանություն	14.1	Դատական համակարգի անկախություն-1	ՍԻՌԻ
	14.2	Դատական համակարգի անկախություն-2	ՀՄՀ
	14.3	Դատական համակարգի անկախություն-3	ՍՎ
15. Գործադիր իշխանություն	15.1	Գործադիր իշխանություն	ՍՎ
	15.2	Կառավարության գործունեությունը	ԱԱՀ
	15.3	Կառավարության արդյունավետություն	ՀԿՑ
	15.4	Կառավարման որակ	ՀԿՑ
	15.5	Կառավարության ծախսումների շռայլումը	ՀՄՀ
	15.6	Կառավարության կարգավորումների բեռը	ՀՄՀ
	15.7	Կառավարության քաղաքականության թափանցիկություն	ՀՄՀ
16. Օրենսդիր	16.1	Օրենսդիր իշխանություն	ՍՎ

իշխանություն	16.2	Օրենսդրական համակարգի արդյունավետությունը վեճերի կարգավորման գործում	ՀՄՀ
	16.3	Օրենսդրական համակարգի արդյունավետությունը կարգավորումների վիճարկման գործում	ՀՄՀ
17. Կոռուպցիա	17.1	Կոռուպցիայից ազատություն	ՏԱՀ
	17.2	Պետական միջոցների ոչ նպատակային օգտագործումը	ՀՄՀ
	17.3	Անօրինական վճարներ և կաշառակերություն	ՀՄՀ
	17.4	Պետական այրերի վճիռների վրա հովանավորչության ազդեցությունը	ՀՄՀ
	17.5	Կոռուպցիայի նկատմամբ հսկողություն	ՀԿՑ

Ծանոթագրություն: *ՀԶՑ-Համաշխարհային զարգացման ցուցիչներ, ՀՓ-Համաշխարհային փաստագիրք, ՏԱՀ-Տնտեսական ազատության համաթիվ, ՀՄՀ-Համաշխարհային մրցունակության համաթիվ, ՏԱԱ-Տնտեսական ազատությունն աշխարհում համաթիվ, ՍԻՌԻ-Սինգրանելլի-Ռիչարդս Մարդու իրավունքների տվյալների ծրագիր, ՍԱՏՀ-Սոցիալական ապահովության տվյալների հենք, ՅՎԻ-Յունեսկոյի վիճակագրական ինստիտուտ, ՄԶՀ-Մարդկային զարգացման համաթիվ, ՄԱՀՀ-Մամուլի ազատության համաշխարհային համաթիվ, ՖՀ-Ֆրիդոմհաուս, ՀԿՑ-Համաշխարհային կառավարման ցուցիչներ, ՄԱՀ-Մարդկային ազատության համաթիվ, ՎՀ-Վերափոխման համաթիվ, ՍՎ-Սահմանադրական վարկանիշեր:*

Ատենախոսության **երրորդ՝ «Սահմանադրականության գնահատման մեթոդաբանական մոտեցումներն ու արդյունքները» գլխում** ներկայացված է սահմանադրականության գնահատման տնտեսագիտամաթեմատիկական մեթոդաբանությունը՝ որպես ներքոշարադրյալ վեց քայլերից բաղկացած <u>քայլաշար</u>:

Դիցուք, առկա է M հատ երկիր $(c = 1, \dots, M)$ և P հատ ենթացուցիչ $(p = 1, \dots, P)$: Արդյունքում կձևավորվի $(P\ x\ M)$ –չափանի տվյալների հենքը՝ $X = \{x_{pc}\}, p = 1, \dots, P$, $c = 1, \dots, M$, որտեղ x_{pc} –ն՝ p –րդ ենթացուցչի արժեքն է c –րդ երկրի համար: «Սահմանադրականության համաթվի» տվյալների հենքը բաղկացած է 142 երկրների գրծով, տվյալների 16 միջազգային շտեմարաններից ձևավորված 58 ենթացուցիչների 8236 արժեքներից:

Քայլ 1. Բացակայող տվյալներին արժեքների վերագրում. Վերջիններիս փոքր թվով (ընդհանուր տվյալների 0.75%-ը) պայմանավորված՝ կիրառվել է միջինով տեղադրման եղանակը՝ $\bar{x}_p = \frac{1}{m_p}\sum_{c=1}^{m_p} x_{pc}$, որտեղ m_p –ն՝ p –րդ ենթացուցչի չբացակայող տվյալների թիվն է: Այնուհետ, իրականացվել է վերագրված արժեքների ճշգրտում՝ քլաստերային վերլուծության հիման վրա:

Քայլ 2. Բազմաչափ վերլուծություն ըստ ենթացուցիչների. Ձևավորված ցուցչակազմն, իր կառուցվածքով, բխում է սահմանադրականության մշակված տեսական ձևաչափից, ուստի ենթացուցիչների դասակարգումը վիճակագրական մեթոդներով անիմաստ է: Այդուհանդերձ, դեռևս անհրաժեշտ է որոշակի պատկերացում կազմել դրանց փոխառնչությունների վերաբերյալ: Այդ նպատակով կառուցվել է $(P\ x\ P)$ –չափանի կոռելյացիոն մատրիցը՝ $R = \{r_{ij}\}, \forall i, j \in \{1, \dots, P\}$, որի տվյալները՝ զույգային կոռելյացիաները խմբավորվել են ըստ ցուցիչների, յուրաքանչյուր խմբի ներսում առանձնացվել են այն (i, j) զույգերը, որոնց համար $r_{ij} > 0{,}9$, և յուրաքանչյուր նման զույգի ենթացուցիչներից մեկը հեռացվել է տվյալների հենքից:

Քայլ 3. Տվյալների բնականոնացում. Նախ լուծվել է *օրինաչափությունից շեղված կետերի* խնդիրը՝ հետևյալ մոտեցմամբ.

$$upper(x_p) = Q1_p - 1.5(Q3_p - Q1_p),$$
$$lower(x_p) = Q3_p + 1.5(Q3_p - Q1_p),$$
որտեղ $upper_p$ –ն և $lower_p$ –ն p –րդ ենթացուցչի թույլատրելի վերին և ստորին շեմերը են, համապատասխանաբար, որոնց տիրույթից դուրս ընկած ցանկացած կետ կհամարվի օրինաչափությունից շեղված, իսկ $Q1_p$ –ն և $Q3_p$ –ն p –րդ ենթացուցչի առաջին և երրորդ քվանտիլների արժեքներն են, համապատասխանաբար:

Սահմանադրականության գնահատման ենթացուցիչների բնականոնացման համար անհրաժեշտ է համարվել, որ.

1. բոլոր ենթացուցիչներն ունենան գնահատման միանման 0-ից 100 միավորանոց սանդղակ, որտեղ 0-ն սահմանադրականության ցածրագույն, իսկ 100-ը՝ բարձրագույն մակարդակն է: Բնականոնացումն իրականացվել է *նվազագույն-առավելագույն մեթոդով*, որի շրջանակներում յուրաքանչյուր x_{pc} արժեք փոխակերպվել է x_{pc}^n –ի հետևյալ կերպ.

$$x_{pc}^n = \frac{x_{pc} - min(x_p)}{max(x_p) - min(x_p)} * 100, \text{ եթե շեղված կետ(եր) առկա չէ(չեն) և}$$
$$x_{pc}^n = \frac{x_{pc} - lower(x_p)}{upper(x_p) - lower(x_p)} * 100, \text{ եթե շեղված կետ(եր) առկա է(են),}$$
որտեղ $min(x_p)$ –ն և $max(x_p)$ –ն p –րդ ենթացուցչի նվազագույն և առավելագույն արժեքներն են բոլոր երկրների շրջանում:

2. բոլոր ենթացուցիչներն ունենան միանման կախվածություն (ուղղվածություն) սահմանադրականության հետ: Որպես այդպիսին ընդունվել է «որքան բարձր, այնքան լավ» սկզբունքը.

$$\begin{cases} c_i \; pr \; c_k \;\Leftrightarrow\; x_p^n(c_i) > x_p^n(c_k), \\ c_i \; ind \; c_k \;\Leftrightarrow\; x_p^n(c_i) = x_p^n(c_k), \end{cases}$$
որտեղ՝ pr –ն և ind –ն ցույց են տալիս i –րդ և k –րդ երկրների միջև նախընտրելիության և անտարբերության հարաբերությունները, համապատասխանաբար:

Այս ենթաքայլի համատեքստում, բոլոր ենթացուցիչները ստորաբաժանվել են երկու խմբի՝ ըստ սահմանադրականության հետ դրական (+) և բացասական (-) կախվածության, որից հետո բնականոնացված ենթացուցիչները ճշգրտվել են հետևյալ կերպ.

$$x_{pc}^{ń} = \begin{cases} x_{pc}^n, & \text{եթե} +, \\ 100 - x_{pc}^n, & \text{եթե} -: \end{cases}$$

Քայլ 4. Ենթացուցիչների կշռում և միացքավորում. Ենթացուցիչների կշռման համար կիրառվել է *հավասար կշռման մեթոդը*՝ $w_q = {}^1/_{n_q}$, որտեղ n_q –ն՝ q –րդ ցուցչի կազմի մեջ մտնող ենթացուցիչների քանակն է, իսկ w_q –ն՝ q –րդ ցուցչի կազմի մեջ մտնող ենթացուցիչներից յուրաքանչյուրին տրվող կշիռը: Ենթացուցիչների միացքավորումն իրականացվել է *գծային միացքավորման մեթոդով*՝ $I_{qc} = \sum_{p=1}^{n_q} w_q x_{pc}^{ń}$, որտեղ I_{qc} –ն՝ q –րդ ցուցչի արժեքն է c –րդ երկրի համար:

Քայլ 5. Բազմաչափ վերլուծություն ըստ երկրների և ցուցիչների. Ըստ երկրների բազմաչափ վերլուծությունն իրականացվել է քլաստերային վերլուծության եղանակով: Կիրառվել է երկքայլ քլաստերային վերլուծության մեթոդը, որը թույլ է տվել ստանալ նաև յուրաքանչյուր ցուցչի հարաբերական կարևորության մակարդակը: Կի-

ռառվել է նաև K-միջինների և աստիճանակարգային քլաստերային վերլուծության մեթոդների համադրությունը:

Բազմաչափ վերլուծությունն ըստ ցուցիչների իրականացվել է *Կրոնբախի ալֆա գործակցի* հիման վրա՝ $\alpha_c = \left(\frac{Q}{Q-1}\right)\frac{\sum_{i\neq j} cov(I_i, I_j)}{var(I_0)} = \left(\frac{Q}{Q-1}\right)\left(1 - \frac{\sum_j var(I_j)}{var(I_0)}\right), c = 1, \dots, M; i, j = 1, \dots, Q$, որտեղ $I_0 = \sum_{q=1}^{Q} I_j$ –ն բոլոր ցուցիչների գումարն է, $\alpha_c \in [0,1]$, որի բարձր մակարդակը (0.926) վկայել է ձևավորված ցուցչակազմի բարձր հուսալիության մասին:

Քայլ 6. Ցուցիչների կշռում և միացքավորում. Որպես ցուցիչների կշռման մեթոդաբանական հիմք է ընդունվել *գործոնային վերլուծության մոդելը*[6]: Վերջինս $I_q = \left(I_{q1}, I_{q2}, \dots, I_{qM}\right)^T, q = 1, \dots, Q$ ցուցիչներից յուրաքանչյուրը ներկայացնում է, որպես $f_e, e = 1, \dots, E, E < Q$ ընդհանուր գործոնների գծային համակցություն՝ հաշվի առնելով նաև ε_q սխալի տարրը, որն արտացոլում է ցուցչի այն մասը, որը յուրահատուկ է: Մո-դելը ներկայացվում է հետևյալ կերպ.

$$\widehat{I_1} - \mu_1 = \lambda_{11} f_1 + \lambda_{12} f_2 + \dots + \lambda_{1E} f_E + \varepsilon_1$$
$$\widehat{I_2} - \mu_2 = \lambda_{21} f_1 + \lambda_{22} f_2 + \dots + \lambda_{2E} f_E + \varepsilon_2$$
$$\vdots$$
$$\widehat{I_Q} - \mu_Q = \lambda_{Q1} f_1 + \lambda_{Q2} f_2 + \dots + \lambda_{QE} f_E + \varepsilon_Q$$

որտեղ $\widehat{I_q}, q = 1, \dots, Q$ –ն I_q վեկտորի յուրաքանչյուր տարրի և μ_Q –ի՝ յուրաքանչյուր q –րդ ցուցչի արժեքների միջինի տարբերությունն է, իսկ λ_{qe} –ն՝ բեռնվածություններ-ը են, որոնք ծառայում են, որպես կշիռներ:

Տվյալ մոդելի կիրառության արդյունքում ստացվել է ցուցիչների կշիռների բազմությունը դիտարկված բոլոր երկրների համար՝ $w = \{w_{qc}\}, q = 1, \dots, Q, c = 1, \dots, M$, որոնք այնուհետև միացքավորվել են *գծային միացքավորման մեթոդով՝* $IC_c = \sum_{q=1}^{Q} w_{qc} I_{qc}$, որտեղ $\sum_q w_q = 1, 0 \leq w_{qc} \leq 1$, բոլոր $q = 1, \dots, Q$ և $c = 1, \dots, M$ համար:

Այսպիսով, մշակված քայլաշարի կիրառության արդյունքում, ստացվեց սահմանադրականության մակարդակի գնահատականն արտացոլող «Սահմանադրականության համաթվի» արժեքների բազմությունը՝ $IC = (IC_1, \dots, IC_M)$ աշխարհի 142 երկրների համար (տե՛ս աղյուսակ 2):

Ատենախոսության **«Եզրակացություններ»** բաժնում ներկայացված են իրականացված հետազոտության արդյունքում ստացված հիմնական եզրահանգումները:

ՀՀ-ում սահմանադրականության վիճակի ախտորոշման հիմնարդյունքներն են.

- 2016 թ. Հայաստանի Հանրապետությունը «Սահմանադրականության համաթվի» վարկանշային աղյուսակում աշխարհի 142 երկրների շարքում զբաղեցրել է 95-րդ հորիզոնականը:
- Հայաստանը դասվել է սահմանադրականության միջինից ցածր մակարդակ ունեցող երկրների շարքը:
- Սահմանադրականության մակարդակը Հայաստանում կազմել է 43.9 միավոր, իսկ սահմանադրականության պակասուրդը, համապատասխանաբար, 56.1 միավոր:

[6] Տե՛ս **Rencher, A.C.** "Methods of Multivariate Analysis," 2nd ed., Wiley-Interscience pub., 2002, էջ 408-421, IBM SPSS Statistics 22 Algorithms, 2013, էջ 336-338:

- Հետխորհրդային երկրների շարքում սահմանադրականության մակարդակով Հայաստանը գերազանցում է Ռուսաստանին, Ադրբեջանին, Տաջիկստանին, Ղազախստանին ու Ղրղզստանին և զիջում Մերձբալթյան երկրներին, Վրաստանին, Ուկրաինային ու Մոլդովային:
- Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի բոլոր երկրները գերազանցում են Հայաստանին «Սահմանադրականության համաթվի» արժեքով:
- Հայաստանի Հանրապետությունում սահմանադրականության պակասուրդը պայմանավորող հիմնական գործոններն են սոցիալական ապահովության իրավունքի, սեփականության իրավունքի ոչ բավարար իրացվածությունը, դատական իշխանությունը, իշխանական թևերի բաժանման և իրավունքի գերակայության ցածր մակարդակը, ըստ հաջորդականության:
- Սահմանադրականության պակասուրդին նվազագույնս են նպաստել աշխատանքի իրավունքը, բավարար կենսամակարդակի իրավունքը, տնտեսական գործունեությամբ զբաղվելու և ազատ տեղաշարժման իրավունքը:
- Սահմանադրականության ապահովման գործում պետաիշխանական հաստատությունների շարքում ամենամեծ դերակատարությունը պատկանում է դատական իշխանությանը, այնուհետև՝ գործադրին և օրենսդրին:

Գծապատկեր 2. Սահմանադրականության ՀՀ քարտեզը[7]



[7] Կառուցվել է հեղինակի կողմից:

Աշխարհում սահմանադրականության վիճակի ախտորոշման հիմնարդյունքները են.

- Աշխարհի 142 երկրների շարքում սահմանադրականության ամենաբարձր մակարդակ ունեցող երկրներն են՝ Դանիան, Ֆինլանդիան, Նոր Զելանդիան, Միացյալ Թագավորությունը, Իռլանդիան, Բելգիան և Ավստրիան:
- Դիտարկված երկրների շարքում սահմանադրականության ամենաբարձր պակասուրդ ունեցող երկրներն են՝ Զիմբաբվեն, Եմենը, Լիբիան, Սիրիան և Իրանը: Նկատենք, որ վերջիններիս շարքում այնպիսի երկրներ են, որոնք այսօր գտնվում են սահմանադրական լրջագույն ճգնաժամում և պետականության փլուզումների հորձանուտում:
- Սահմանադրականության միջին մակարդակն աշխարհում 53 միավոր է, ինչը նշանակում է, որ սահմանադրականության պակասուրդը համաշխարհային գերակա միտում է:
- Հյուսիսային Ամերիկայի (79.1 միավոր), Եվրոպայի ու Կենտրոնական Ասիայի (65 միավոր) տարածաշրջանները բնութագրվում են սահմանադրականության բարձր մակարդակով, Արևելյան Ասիայի (54.9 միավոր) և Լատինական Ամերիկայի (52.7 միավոր) տարածաշրջանները՝ միջին, իսկ Հարավային Ասիայի (43.3 միավոր), Ենթասահարային Աֆրիկայի (42.4 միավոր) և Մերձավոր Արևելքի ու Հյուսիսային Աֆրիկայի (40.4 միավոր) տարածաշրջանները՝ ցածր մակարդակով:

Գծապատկեր 3. Սահմանադրականությունն աշխարհում 2016 թ.[8]



[8] Կառուցվել է հեղինակի կողմից:

Աղյուսակ 2. Սահմանադրականության համաթվի 2016 թ. վարկանիշերը

	Երկիր	Միավոր
1	Դանիա	87.88
2	Ֆինլանդիա	85.98
3	Նոր Զելանդիա	85.34
4	Շվեդիա	85.10
5	Շվեյցարիա	85.07
6	Նիդերլանդներ	84.84
7	ՄԹ	83.98
8	Իռլանդիա	83.92
9	Բելգիա	83.20
10	Ավստրիա	83.10
11	Ավստրալիա	82.65
12	Ճապոնիա	81.85
13	Կանադա	81.03
14	Իսլանդիա	80.78
15	Նորվեգիա	80.62
16	Էստոնիա	79.21
17	Գերմանիա	79.11
18	Լյուքսեմբուրգ	78.88
19	ԱՄՆ	77.13
20	Ֆրանսիա	75.61
21	Չեխիա	73.95
22	Սլովենիա	73.58
23	Կիպրոս	73.21
24	Ուրուգվայ	73.04
25	Պորտուգալիա	72.28
26	Լեհաստան	71.60
27	Իսպանիա	70.89
28	Չիլի	70.41
29	Բարբադոս	69.87
30	Մալթա	69.46
31	Մավրիկիոս	68.23
32	Իտալիա	67.83
33	Լիտվա	67.72
34	Կոստա Ռիկա	66.9
35	Սլովակիա	64.52
36	Լատվիա	63.33
37	Հվ. Կորեա	63.33
38	Սինգապուր	62.80
39	Կաբո Վերդե	62.26
40	Ճամայկա	61.50
41	Խորվաթիա	61.45
42	Տրինիդադ և Տոբագո	61.36
43	Հվ. Աֆրիկա	60.79
44	Հունգարիա	60.75
45	Բոթսվանա	60.27
46	Հունաստան	59.75
47	Մոնղոլիա	59.67
48	Գանա	58.89
49	Ռումինիա	58.47
50	Բրազիլիա	58.00
51	Չեռնոգորիա	57.60
52	Մակեդոնիա	57.32
53	Բելիզ	57.32
54	Սուրինամ	57.28
55	Նամիբիա	56.90
56	Պանամա	56.41
57	Արգենտինա	56.00
58	Բուլղարիա	55.95
59	Իսրայել	54.55
60	Էլ Սալվադոր	53.42
61	Սեյշելյան կղզիներ	52.94
62	Գայանա	51.79
63	Սերբիա	51.75
64	Ալբանիա	51.54
65	Լեսոթո	51.53
66	Վրաստան	51.21
67	Մեքսիկա	51.03
68	Պերու	50.59
69	Հնդկաստան	50.56
70	Թուրքիա	50.26
71	Ուկրաինա	50.26
72	Քաթար	49.74
73	Ֆիլիպիններ	49.25
74	Մալայզիա	49.11
75	Բութան	49.09
76	Պարագվայ	49.05
77	Կոլումբիա	48.91
78	Թունիս	48.91
79	Բենին	48.24
80	Բոսնիա և Հերց.	47.78
81	Գվատեմալա	47.73
82	Բոլիվիա	47.65
83	Մալավի	47.18
84	Ինդոնեզիա	47.13
85	Սենեգալ	46.84
86	Բրունեյ	46.71
87	Մոլդովա	46.10
88	ԱՄԷ	45.99
89	Մալի	45.63
90	Զամբիա	45.19
91	Քուվեյթ	45.06
92	Գաբոն	44.43
93	Բուրկինա Ֆասո	44.38
94	Դոմինիկյան Հանր.	44.28
95	Հայաստան	43.87
96	Տանզանիա	43.72
97	Թայլանդ	43.32
98	Բահրեյն	43.31
99	Նեպալ	43.26
100	Ղազախստան	42.78
101	Հորդանան	42.69
102	Ռուանդա	42.14
103	Հոնդուրաս	41.87
104	Էկվադոր	41.66
105	Շրի Լանկա	39.91
106	Լիբանան	39.61
107	Քենիա	39.30
108	Բանգլադեշ	39.20
109	Ուգանդա	39.17
110	Սիերա Լեոնե	38.53
111	Օման	38.50
112	Կամբոջա	38.27
113	Ղազախստան	38.22
114	Գամբիա	37.98
115	Կոտ Դիվուար	37.62
116	Տաջիկստան	37.43
117	Նիկարագուա	37.01
118	Եգիպտոս	36.68
119	Հայիթի	36.24
120	Մոզամբիկ	35.96
121	Մարոկկո	35.85
122	Ալգերիա	35.13
123	Ադրբեջան	34.02
124	Ս. Արաբիա	33.97
125	Մադագասկար	33.30
126	Ռուսաստան	33.18
127	Սվազիլենդ	32.59
128	Պակիստան	32.01
129	Բուրունդի	31.28
130	Եթովպիա	30.67
131	Չադ	30.38
132	Գվինեա	29.91
133	Կամերուն	29.50
134	Չինաստան	29.41
135	Վիետնամ	29.21
136	Վենեսուելա	28.90
137	Անգոլա	28.46
138	Իրան	27.92
139	Սիրիա	25.36
140	Լիբիա	24.13
141	Եմեն	22.88
142	Զիմբաբվե	21.64

Ատենախոսության հիմնական դրույթները հրապարակվել են հեղինակի հետևյալ մենագրությունում և ինը գիտական հոդվածներում.

1. **Մխիթարյան Ժ.** Սահմանադրատնտեսագիտություն. տնտեսագիտական մոտեցում սահմանադրականությանը. -Եր.: Գասպրինտ հրատ., 2016. -120 էջ:
2. **Սարգսյան Հ., Գևորգյան Ռ., Մխիթարյան Ժ.** Սահմանադրականության գնահատում. մեթոդաբանական մոտեցումներ // *Հանրային կառավարում գիտական հանդես*, N. 2, 2016, էջ 103-112:
3. **Մխիթարյան Ժ.** Սահմանադրականության տնտեսագիտության տիրույթը // *Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի լրաբեր*, Հատ. 13, N. 1, 2016, էջ 86-91:
4. **Սարգսյան Հ., Մխիթարյան Ժ.** Երկրի սահմանադրականության մակարդակի գնահատումը դիսկրետ մոդելավորման և քլաստերային վերլուծության մեթոդներով // *Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի*, N. 3 (39), 2015, էջ 111-127:
5. **Մխիթարյան Ժ.** Սահմանադրականության գնահատման հայեցակարգային մոտեցումները // *Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի լրաբեր*, Հատ. 12, N. 3, 2015, էջ 437-446:
6. **Մխիթարյան Ժ.** Սահմանադրականության գնահատման մեթոդաբանական մոտեցումները // *Ճարտարապետության և շինարարության ՀԱՀ տեղեկագիր,* N. 4 (48), 2015, էջ 70-78:
7. **Саркисян Г., Мхитарян Ж., Нагапетян С.** Конституционализм в контексте конституционной экономики // *Актуальные проблемы экономической теории и практики*, Кубанский государственный университет, N. 19, 2015, с. 33-42.
8. **Մխիթարյան Ժ.** «Անորոշության օգուտի» մոդելը որպես համաթվերի կառուցման մեթոդաբանական հիմք // *Ճարտարապետության և շինարարության ՀԱՀ գիտական աշխատություններ,* Հատ. 1, N. 60, 2016, էջ 108-116:
9. **Մխիթարյան Ժ.** Տվյալների բնականոնացման մեթոդաբանական մոտեցումները // *Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի լրաբեր*, Հատ. 12, N. 2, 2015, էջ 246-250:
10. **Մխիթարյան Ժ.** Ցուցիչների ագրեգացման մեթոդաբանական մոտեցումները // *Ճարտարապետության և շինարարության ՀԱՀ գիտական աշխատություններ*, Հատ. 3, N. 58, 2015, էջ 89-94:

МХИТАРЯН ЖИРАЙР САМВЕЛОВИЧ

Экономико-математические методы оценки конституционализма

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности: 08.00.08 – «Математическая экономика»

Защита диссертации состоится 3-го февраля 2017 г. в 15^{00} часов на заседании Специализированного совета по экономике 015 ВАК РА, действующего в Ереванском государственном университете.
Адрес: 0009, г. Ереван, ул. Абовяна 52.

РЕЗЮМЕ

Основная цель диссертации заключается в оценке уровня конституционализма и в формировании устойчивых основ для его постоянного мониторинга.

Для реализации этой цели в диссертации сформулированы и решены следующие задачи:

- исследовать область конституционной экономики,
- осуществлять критический анализ экономического сечения конституционных реформ РА,
- предоставить операциональное определение конституционализма,
- структуризировать понятие конституционализма,
- сформировать базу данных оценки конституционализма,
- построить экономико-математическую методологию оценки конституционализма,
- оценить уровень конституционализма в каждом из наблюдаемых стран,
- диагностировать состояние конституционализма и раскрыть причины дефицита конституционализма, определив пути его преодоления на примере РА и сформировав устойчивые основы для его мониторинга.

Предметом исследования диссертации является конституционализм в разных странах мира и в частости в РА, а объектом исследования является разработка экономико-математических методов оценки уровня конституционализма.

В первой главе диссертации «Конституционно-экономический домен исследования» представлен трехмерный домен, в частности Экономика конституционализма, как новый рубеж развития экономической теории, парадигма Конституционной экономики, как научное направление, которому была присуждена Нобелевская премия и критический анализ экономического сечения конституционных реформ РА.

Во второй главе диссертации «Концептуальные подходы к оценке конституционализма» предоставлено операциональное определение конституционализма, исследованы его элементы, сформировано структурный формат оценки конституционализма, сформированы базы данных оценки конституционализма, система индикаторов и субиндикаторов.

Третья глава диссертации «Методологические подходы к оценке конституционализма и их применение» посвящена к построению экономико-математической методологии оценки конституционализма, с помощью которого получены оценки уровня конституционализма в 142 странах мира.

Полученные результаты имеют теоретическую, методическую и практическую направленность.

Основная научная новизна работы состоит в следующем:

- осуществлено применение «экономического подхода» к конституционализму, сформированы границы домена Экономики конституционализма,
- предложен концептуальный формат оценки конституционализма, в том числе операциональное определение конституционализма, структура понятия конституционализма и Индекса конституционализма, система индикаторов и субиндикаторов конституционализма,
- разработана индексная методология оценки конституционализма, которая базируется на экономико-математическом и эконометрическом инструментарии,
- получены уровни Индекса конституционализма в 142 странах мира,
- осуществлен системный анализ экономического сечения конституционных реформ РА.

MKHITARYAN ZHIRAYR SAMVEL

Economic-Mathematical Methods of Evaluation of Constitutionalism

Abstract of the Dissertation for pursuing the degree of PhD in Economics in the field 08.00.08 – "Mathematical Economics".

The defense of the Dissertation will take place on February 3, 2017 at 15^{00} at the meeting of the Specialized Council 015 in Economics of the Supreme Certifying Commission of the Republic of Armenia acting at the Yerevan State University.
Address: 52 Abovyan St., Yerevan, 0009.

ABSTRACT

The main goal of dissertation is the evaluation of the level of constitutionalism and the formation of a sustainable basis for its monitoring.

The following problems were solved to achieve that goal:

- to analyze the domain of constitutional economics,
- to perform a critical analysis of the economic cross section of constitutional reforms in RA,
- to provide an operational definition of constitutionalism,
- to structure the concept of constitutionalism,
- to form database for evaluation of constitutionalism,
- to build an economic-mathematical methodology of evaluation of constitutionalism,
- to evaluate the level of constitutionalism in each of the observed countries,
- to diagnose the stance of constitutionalism and to reveal the reasons of its deficit by defining the ways of its reduction on the example of RA and by forming a sustainable basis for its monitoring.

The subject of the research is the development of economic-mathematical methods of evaluation of the level of constitutionalism, and the object of the research is constitutionalism in various countries of the world and particularly in RA.

In "Constitutioeconomic research domain" - the first chapter of the dissertation - the three-dimensional domain is presented, in particular the Economics of Constitutionalism as a new milestone in the development of economics, the Constitutional Economics as a scientific direction which was awarded a Nobel Prize in Economics, and the critical analysis of economic cross section of constitutional reforms in RA.

In "Conceptual approaches to the evaluation of constitutionalism" - the second chapter of the dissertation - the operational definition of constitutionalism is provided, its core

elements are analyzed, the structural format of the evaluation of constitutionalism is provided, the databases of evaluation are formed, and finally the system of indicators and sub-indicators is developed.

In "Methodological approaches to the evaluation of constitutionalism and the results" - the third chapter of the dissertation - the economic-mathematical methodology of construction of the Index of Constitutionalism is developed and the levels of constitutionalism in 142 countries of the world are determined.

The obtained results have theoretical, methodological and applied importance, whose scientific content are the following:

- the "economic approach" has been applied to the constitutionalism, the domain of the Economics of Constitutionalism has been formed,
- the conceptual format of the evaluation of constitutionalism, including the operational definition of constitutionalism, the structure of the concept of constitutionnalism and the Index of Constitutionalism, the system of indicators and sub-indicators of constitutionalism,
- the methodology of the evaluation of constitutionalism is developed, which is based on the economic-mathematical and econometric tool-kit,
- the results of the level of constitutionalism are obtained for 142 countries of the world,
- the results of intra- and inter-country comparative analysis of constitutionalism are obtained, by accenting the diagnosis of the stance of constitutionalism in RA.